Հայկական միջնադարյան զանգերը գրեթե չեն ուսումնասիրվել։ Փոքր չափերի մի զանգի լուսանկար է բերված Ս. Փափազյանցի մոտ[11] (զանգը գտնվել է Վայոց Ձորի Դայլախլու գյուղում)։ Հետագայում այդ լուսանկարը մտել է Նախիջևանի փոխանորդ Գրիգոր վարդապետ Հակոբյանի հավաքածուի մեջ։

Տաթևի հին զանգակատան շինությունը վերագրվում է Հովհան Որոտնեցուն։ Սակայն Ստեփանոս Օրբելյանի կողմից զանգերի պատվիրման փաստը ցույց է տալիս, որ հենց Ստ. Օրբելյանն է սկսել նրա շինարարությունը, իսկ ավարտել է Որոտնեցին[12]։ Մինչև 1931 թ. երկրաշարժը զանգերը կախված են եղել արդեն նոր զանգակատանը։

Տաթևի զանգերից մեկի վրա կա երկու տողանոց, մյուսի վրա՝ երեք տողանոց արձանագրություն, տարբեր բովանդակությամբ։ Այդ արձանագրությունները հրապարակված են[13], սակայն մասամբ թերի, մասամբ էլ՝ սխալաշատ և վրիպակներով։

Բերում ենք այդ արձանագրությունները լրիվ վերծանությամբ։ Սովորական հապավումները բացում ենք առանց նշման, իսկ մյուսները՝ անկյունավոր փակագծերով։

Առաջին զանգ

1. ԼՍԵԼԻ ԱՐԱ ԻՆՁ, ՏԷՐ, ՁՁԱՅՆ ՅՆԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՁՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ[14]
[ ][15]։ ՁԾԱ ԹՎ[16]։

2. ԱՆԵՂԷՆ[17] ԾՆՈ[Ի]ՆԴԵԱ[Մ]Բ[18] ՁՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՍԻՒՆԵԱՑ ԳԱՀԻ[19] ԿՈՁԵԱ Ի ՓԱՌՍԴ ՀԱՅՐԵՆԻ[21]։

Տե՛ս Բաբկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., I, Երևան, 1958, էջ 161։

11 Ս. Փափազեանց, Հնութիւնք վանորէից Հայոց, Գիրք V, Սիւնաց աշխարհ, Վաղարշապատ, 1895, լուսանկար 35113։

12 Մ. Տեր-Մովսիսյան, Հայաստանի երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դազի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 40։

13 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 236, Ս. Փափազյանց, նշվ. աշխ., Ե. Լալայան, Տաթև, «Ազգ. հանդէս», գիրք Գ, Թիֆլիս, 1898, № 1, էջ 141, Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 153—154, Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 47, Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 37։

14 Ե. Լալայանի մոտ՝ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ։

15 Այստեղ նշան կա, որ չի ընթերցվում, իսկ նախորդ հրատարակիչների մոտ չի հիշատակվում։ Մենք հակված ենք այն դիտելու որպես վարպետի նշան։

16 Ս. Փափազյանցի մոտ սույն արձանագրությունը պակասում է։

17 Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԱՆԵՂԻՆ, Փափազյանց, Տեր-Մովսիսյան՝ ԱՆԵՂ ԷՆ։

18 Նախորդ հրատարակիչներ՝ ԾՆՆԴԵԱՄԲ։

19 Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԳԱՀԻՆ։

20 Փափազյանց՝ ԿՈՁԵԱՑ։

21 Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ՀԱՅՐԵՆԵԱՑ։